ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ

08.10.2020 19:02

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը դեսպանատներին, միջազգային կառույցներին և փաստաբանների միություններին կոչ է ուղղել:

Կոչը վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավվմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկած ռազմական հարձակմանը, որի շրջանակներում թիրախավորվել են ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, մշակութային կենտրոնը՝ Շուշին:

ՀՀ փաստաբանների պալատը կոչ է անում դեսպանատներին, միջազգային կառույցներին, փաստաբանների միություններին իրենց լիազորությունների շրջանակում իրավական գնահատական տալ նշված իրադարձություններին և խստորեն դատապարտել՝

1. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից վարձկան ահաբեկիչների ներգրավվումը ռազմական գործողություններին.

2.Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) խաղաղ բնակավայրերի, մշակութային օբյեկտների, եկեղեցու և խաղաղ բնակչության ոչնչացմանն ուղղված պատերազմական հանցագործություն համարվող գործողությունները.

3. Ադրբեջանի կողմից արգելված զինատեսակների օգտագործումը:

Փաստաթղթում ներկայացված են նաև Արցախի Հանրապետությունում տիրող իրավիճակի վերաբերյալ փաստերը և իրավական վերլուծությունը:

Բեռնել փաստաթուղթը հայերեն.

Բեռնել փաստաթուղթն անգլերեն.

Բեռնել փաստաթուղթը ռուսերեն.

Առաջարկվող նորություններ

30.09.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒՆԵՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎԵՃԱՐ ՎԵՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

08.10.2020ԻՐԱՎԱՍՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ՁՈՐԱՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՐՑՄԱՆԸ

09.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })